

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2011թ. սեպտեմբերի 5-9-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրական ծառայության գների և սպառման բաժնի ղեկավար Փոլ Լիբզոնը, Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի գների վիճակագրության վարչության սպառողական գների ինդեքսի բաժնի ղեկավար Օսկարս Աշկինսը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի ներդրում» ծրագրի ներքո,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 19-23-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Համաշխարհային բանկի գների գծով խորհրդատու Դեյվիդ Ռոբերթսը և ազգային հաշիվների գծով խորհրդատու Դերեկ Բլայդսը, Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակի գների ենթաբաժնի պետ Նանա Ծիկլաուրին և նույն ենթաբաժնի գլխավոր մասնագետ Մայա Չելիձեն «Միջազգային համադրումներ» ծրագրի ներքո,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 22-24-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Շվեդիայի վիճակագրական ծառայության գլխավոր խորհրդատու Ռոլֆ Սելանդերը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Գյուղատնտեսության համատարած հաշվառում» բաղադրիչի շրջանակում: Պրն. Ռ. Սելանդերը մասնակցել է գ. Չկալովկայում կազմակերպված «Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նախապատրաստում» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 26-30-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության ֆինանսական բաժնի պետի տեղակալ Անետ Թոմսենը և ազգային հաշիվների բաժնի ստորաբաժանման ղեկավար Մարիա Նիլսոնը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում» բաղադրիչի շրջանակում,

- ✓ 2011թ. սեպտեմբերի 26-30-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության տնօրեն Լարս Թյուգեսենը և տվյալների տարածման բաժնի պետ Անեգրետ Վուլֆը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում: